0,0
3 V-76
2063
1565-ԱՀ

# ՑԱՆԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ

Գրոց տպագրելոց 'ի վենետիկ յաշակերտաց Ամենապատիւ Տ՛ն Մխիթարայ մեծի Աբբայի ըստ կարգի այբուբենից՝ համառօտ բացատրութ՛ք իւրաքանչիւր գրոց։

1810։

25004

017

## Ալպերտ ։

Համառօտութին մի է ծածաբանութեն մեծին Ալպերտի, գրաբառ շարադրութ̃ ։ 'Ի լոյս ածեալ աշխատասիրութեամբ Տն̃ Մխիթարայ մեծի Աբբայի ։ Տպագրեալ յամին 1715 ։

## Ակն հոգւոյ ։

Այս գրքիս մէջը կան, նախ՝ շաբթու ամէն օրւան աղօթքներ ։ Երկրորդ՝ առաւօտեան, կէսաւուր, և երեկոյեան աղօթքներ ։ Երրորդ՝ մաղթանք ու երգք սբ̃ Ածածնայ ։ Չորրորդ՝ խոստովանութեն համար քննութին խղճի մտաց, գրաբառ շարադրութ̃ ։ Աշխատասիրութ̃ Տն̃ Մխիթարայ մեծի Աբբայի ։ Տպագրեալ յամին 1770 ։

## Աղբիւր բարի ։

Հոգևորական խրատներ՝ ու անոնց յարմարաւոր պատմութիններ . գրաբառ շարադրութ̃ ։ Յօրինեալ հաւաքածոյ Թարգմանութ̃ պետրոսի վարդապետի Թիֆլիզեցւոյ . և սրբագրութ̃ 'ի լոյս ածեալ 'ի Մխիթարայ վարդապետէ ։ Տպագրեալ յամին 1722 ։

## Աղօթամատոյց սր̃յն յովսեփայ ։

Զանազան գովեստներ ու աղօթքներ առ

ծըն յաւէտ յիշելով իրեն մեծամեծ շնորհքները ։ Անոր հետ ուրիշ աղօթքներալ կան առ ս՛ր ածածինն ։ Յօրինեալ յաշակերտաց Տ՜ն Մխիթարայ Աբբայի մեծի · գրաբառ շարագրութ՟ ։ Տպագրեալ յամի տ՜ն 1781 ։

## Ամարանոց բիւզանդեան ։

Տեղեկութիւն ստամպօլու նեղուցին վրայ · ուր տեղն 'ի տեղը կըգրուի ամմէն գեղերը և անոնց հնութիւնները · ոտանաւոր չափով ։ Կայ նաև վէզիրներու յաջորդութիւնը · ու այլ ուրիշ հնութեց յիշատակութիւններ · գրաբառ շարագրութ՟ ։ Արարեալ 'ի Հ. Ղուկաս վարդապետէ Ինճիճեան կոստանդնուպօլսեցւոյ ։ Տպագրեալ յամին 1794 ։

## Այբբենարան կամ քերական՝

Պզտիկ տղոց կարդալ սորվելու համար ։

## Աշխարհագրութիւն ։

Աշխարհքիս չորս մասանց վրայ · ասիոյ, եւրոպիոյ, ափրիկոյ, և ամերիկոյ ։

Աս գրքիս մէջը որ շատ հատոր գործքմընէ շա՛տ զուա՛րճալի ու հարկաւոր գիտնալու բաներ կան՝ ամմէն քաղաքներու, գեղերու, գետերու ու լերանց վր · ամմէն տեղւոյ ու ազգի սովորութիւնը, բնութիւնը, կառավարութիւնը, լեզուն, հաւատքը, երկրին բերքը, ու վաճառքը տեղն 'ի տեղը կըպատմըվի ։ Մինչև հիմայ տասը հատոր տպվեցաւ սկսեալ յամի տ՜ն 1802 ։

Է. Ամերիկայ մէկ հատոր. ուր կըստորա-
գրին ժէ մասնաւոր աշխարհքները որք են՝
Միացեալ ժգ նահանգք. Քանատա. Նոր
Սկովտիա. Պարոյր հուտսոնի. Լուիզիա.
Փլօրիտա. Մէքսիքօ. Նոր Մէքսիքօ. Քա-
լիֆօռնիա. Անգիլեան կղզիք. Ճամայք. Բէ-
րու. Քիլի. Բարակվա. Ամազոնիք. Պրա-
զիլիա. Երկիր մակելլանեան:

Ը. Ափրիկէ մէկ հատոր. ուր կըստորագրին
Եգիպտոս. Բարբարոսաց աշխարհ ծովե-
զերեայ. Բարբարոսաց աշխարհ միջերկրա-
կան, կամ Պիլէտիւլճերիտ. Զաառա. Նիկ-
րիտիա. Կուինէա. Գոնկօվ. Քաֆրաստան.
Եթովպիա. Սոփալա. Զանկուէպար. Այան.
Հապէշ. Նուպիա:

Թ. Եւրոպիա կըբաժնըվի վեց հատոր: Ա-
ռաջինին մէջ կստորագրըվին Փօրդուգալ.
Սպանիա. Գաղղիա կամ Ֆրանսա. Ֆիանտ-
րա. Հօլանտա, կմ Ֆիլէմէնկ. Անգղիա
կմ Ինկիլթէռա. Դանիա. կամ Տանիմար-
քա. Շվէտք: Երկրորդին մէջը՝ Բրուսսիա.
կամ Պրուս. Լեհաստան. Ռուսսիա. կամ
Մոսկով. Զվիցցէրի. և Իդալիա ի մա-
սին: Երրորդին մէջը՝ Մասն Իդալիոյ.
Եօթն կղզիք յոնիականք. և գերմանիայի մէկ
մասը: Չորրորդին մէջը՝ Մնացեալ մասը
գերմանիայի ու Մաճառք: Հինգերորդին
մէջը՝ Աւստրիոյ մայրաքաղաքը պատկերնե-
րով ու աշխարհացոյցներով: Վեցերորդին
մէջը՝ Օսմանեան տէրութիւնը՝ որ յԵւրոպիա:

Ժ. Ասիա. երկու հատորը միայն տպված
է. ի՝ առաջինը և չորրորդը: Առաջինը կը-
գրէ մեծ և փոքր հայաստան աշխարհքին
հիմակվան վիճակին վրայ, կըգրէ նաև մի-
ջագետաց ու կիւլիկիայի վըրայ: Չորրոր-
դին մէջը՝ Հնդիկք, կամ հնդկաստան. Չի-

նաւմաչին · Ճիափոն, կամ կղզեք յափոնայ · և մեկալ ասիական կղզիքը · նոր գտնըված Ֆքներով:

Նոյն աշխարհագրութիւնը շատ հատոր բաժնըված ու շատ ալ պատկերներով. ջղքներու · գեղերու · բերդերու · նաւահանգիստներու · սովորութեանց · հանդիսից · ըղգեստուց այլ և այլ ազգաց՝ զարդարված ։ Նոյն պատկերազարդ աշխարհագրութիւնը աւելի փառաւոր կազմով, ու ներկըված պատկերներով : Սակայն մեկ քանի հատոր ալ կան դեռ կոխըվելու : Ցօրինեալ գրաբառ շարադրութ · աշխատասիրութ Ածապատիւ արհիեպսի և Աբբայի տն Ստեփաննոսի վարդապետի Ագոնց : Եւ Հ· Ղուկաս վարդապետի Ինճիճեան :

## Աշխարհացոյց ։

Համատարած մեծ· փորագրեալ յամստերդամ· յամի տն 1695 :

Համատարած փոքր քառակուսի · փորագրեալ 'ի վանս 'ի Հ· Եղիա վարդապետէ Էնտաղեան կոստանդնուպօլսեցւոյ · յամի տն 1784 :

Հայաստանեայց մեծ՝ փորագրեալ 'ի վենետիկ· յամի տն 1778 :

Հայաստանեայց փոքր՝ փորագրեալ 'ի վանս 'ի Հ· Իգնատիոս վրդպէ խաչատուրեան · յամի տն 1751 :

Երկրին աւետեաց · փորագրեալ 'ի վանս 'ի Հ· Իգնատիոս վարդապետէ խաչատուրեան · յամին 1746 :

Չորից մասանց աշխարհի որիշ որիշ · փորագրեալ 'ի վանս 'ի Հ· Եղիա վրդպէ Էնտաղեան, յամին 1786· և 1787 :

Օսմանեան պետութե · փորագրեալ 'ի վանս 'ի Հ·

Հ. Եղիա Վզտուէ Էնտաղեան • յամին 1787 ։
Սեաւ ծովն ու շրջակայք նր հանդերձ [illegible] ։ Փորագրեալ 'ի Վենետիկ յամին 1791 ։
Նեղուց Կոստանդնուպօլսոյ ։ Փորագրեալ 'ի Վենետիկ յամին 1791 ։
Մարմարա ծովն ու շրջակայք նր ։ Փորագրեալ 'ի Վենետիկ յամին 1805 ։

## Առաքինութեց մոլութեց ։

Այս գիրքս երկու հատոր կըբաժնուի • առաջինին մէջը առաքինութեց վրայ կըխօսի • ու երկրորդին մէջը մոլութեց վրայ • աղէկ քննութ̅ իմացընելով առաքինուե̅ բարութը և մոլուե̅ չարութիւնը ։ Թարգմանեալ գրաբառ շարագրութ̅ 'ի ձեռն յակոբեայ • և տպագրութ̅ 'ի լոյս ընծայել̅ Գերայարգ Տ̅ն Մխիթարայ մեծի Աբբայի յամի տն 1721 ։ Նոյնը երկրորդ անգամ տպագրած խոշոր գրով • ու կրկին անգամ համեմատած հին օրինակաց հետ՝ յաշակերտաց մեծին Մխիթարայ • յամին 1773 ։

## Ածաշունչ ։

Ս̅ գիրք հին և նոր կտակարանաց ։ Մեծ գրեւք՝ և միջակ գրով • շատ ու գեղեցիկ պատկերներով • տպագրեալ աշխատասիրութ̅ գերապատւէ Տ̅ն Մխիթարայ Աբբահօր մերոյ • յամին 1733 ։

Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց ։ Մեր նախնի ս̅րց հարց Թարգմանածին ըստ՝ յոյն հաւատարիմ բնագրէն ։ Նորէն տպեցաւ լաւ ու ընտիր օրինակէ մը, շատ ձեռագիր օրինակներու հետ բաղդա-

տեղով, ու հարկաւոր ծանօթութիւններով ․ մանտրը գրով: Երկու կերպ եղաւ ․ Մեկը՝ ութը ծալքով չորս հատոր բաժնըված ․ գեղեցիկ պատկերք ունին ամեն մէկ հատորները: Երկրորդը՝ նոյն գրով, ու չորս ծալքով ․ մէկ մեծ հատոր է, ամբողջ: Աշխատասիրութբ Հ․ Յովհաննէս վարդապետին զօհրապեան կոստանդնուպօլսեցւոյ ․ տպագրեալ յամին 1805:

## Ատենաբանութիւն:

Ճառ ատենական սբյն Ներսէսի Լամբրոնացւոյն: Այս պըզտի գործքս է մէկ գերազանց բանը հեղինակին գործոց մէջը, ու ճարտասանութե սորվողներու մէկ հատուկ օրինակ: Ասոր հետ տպված են Համբարձման ու Հոգեգալստեան ճառերը նոյն հեղինակին ․ յամին ․ 1787:

## Բառգիրք հայկազեան լեզուին

Երկու հատոր բաժնըված: Հեղինակն է բարեյիշատակ մեր Մխիթար Աբբահայրը իր աշակերտաց գործակցութբը: Առաջին հատորին մէջը կան գրաբառ հասարակ բառերն, ուր մանաւորապէս կըբացատրըվին կենդանեաց անուններըը ․ բուսոց, ականց, չափուց, դրամոց, գործեաց և այլ ուրիշ կահուց ու կարասեաց: Տպագրեալ յամին 1749: Իսկ երկրորդ հատորին մէջը կան նախ՝ մացորդք առաջին հատորէն: Երկրորդ՝ յատուկ անունները: Երրորդ՝ բառք 'ի գրաբառէ յաշխարհաբառ: Չորրորդ՝ յաշխարհաբառէ 'ի գրաբառ: Տպագրեալ յամին 1769:

Բա

## Բառարան յիտալական լեզուէ 'ի հայ և 'ի տաճիկ բարբառ :

Շինված է ընդարձակ և զարդարած շատ կերպ նշանակութիւններով ու ոճերով. օգտակար և հարկաւոր է այլ և այլ գիտութեանց գրքերը հասկընալու: Արարեալ 'ի Հ. Մանուէլ վարդապետէ Ջախջախեան Մխիթարեանացւոյ: Տպագրեալ յամին 1804:

## Բարի խորհուրդներ :

Պզտի հոգևոր գիրք մի է ամսական մտածութեանց . աշխարհաբառ լեզուով 'ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան . տաճկական թարգմանութենէ Պետրոսի վարդապետի Աւգերեան : Տպագրեալ յամի Տն 1809:

## Բուրվառ աղօթից :

Պզտիկ գրքոյկ մի է հատընտիր աղօթից ու հայցուածոց գրաբառ լեզուով. Տպագրեալ յամին 1801:

Նոյնը տպագրած քիչմը մեծ գրքով քան զառաջինը . յամին 1803: Այս տպագրութեանս մէջ քանի մի աղօթք աւելցուցած է առաջնոյն վրայ:

## Դաշտիկ ծաղկալի :

Այս գրքիս մէջը կան խրատք խոստովանահայրց ու զանազան գրաբառ պատմութիւններ: Թարգմանած է 'ի Յունան եպիսկոպոսէ Եւդոկիացւոյ: Տպագրեալ յամին 1727:

## Դժոխք Բացեալ ։

Եօթը մտածումն դժոխքի տանջանաց վըրայ . գրաբառ շարադրութբ ։ Թարգմանած է յաշակերտաց Տն Մխիթարայ մեծի Աբբայի։ Տպագրեալ յամին . 1753 ։

## Դուռն քերականութեն Ծաբառ լեզուին հայոց ։

Աշխատասիրութբ Տն Մխիթարայ մեծի Աբբայի տաճկական լեզուաւ ։ Տպագրեալ յամին 1722.

## Դպրութի նամակաց ։

Որ է գիրք բարեւագրաց ։ Այս գիրքս երեք մասն կըբաժնըվի . առաջինին մէջը կան հարկաւոր կանոններ տեսակ տեսակ թըղթեր գրելու . երկրորդին մէջը՝ շատ կերպ թըղթերու օրինակներ . երրորդին մէջը՝ թէ ինչպէս պէտք գրվի թղթին հասցէն , վերնագիրը , ստորագրութիւնը . ևն ։ Զայս ամ կըսորվեցընէ աս գիրքս երկու լեզուաւ . գրաբառ և աշխարհաբառ ։ Աշխատասիրեալ՝ի Հ . Եղիա վարդապետէ Թովմաճանեան կոստանդնուպօլսեցւոյ ։ Տպագրեալ յամին 1805 ։

## Դրախտ հոգւոյ ։

Հոգեւորական գիրք մի է . գրաբառ շարադրութբ ։ Թարգմանութբ՝ի լոյս ընծայեալ տն Մխիթարայ մեծի Աբբայի ։ Տպագրեալ յամին 1729 ։

Եղ.

## Նշանակ բիւզանդեան :

Որ է գուշակութիւն փոփոխման օդոյ իւրաքանչիւր տարւոյ ամիսն մէկ լուսնի քառորդին՝ ստամպօլու կլիմային վրայ . Հարկաւոր ու զուարճալի տեղեկութիւններով . աշխարհաբառ լեզուաւ :

## Եռանկիւնաչափութիւն :

Երկու մասն բաժնըւած է , մակարդակ և գնտային : Տեսական ու գործնական գիտութիւն է՝ գրաբառ շարադրութիւն , որ եռանկիւնով ու Թուաբանական հնարներով կը չափէ հեռաւորութիւնը ու բարձրութիւնը լեռներու , աշտարակներու , աստղերու՝ եւն : Հանդերձ աղիւսակօք նշանակաց : Յօրինեալ ՚ի Հ . Սահակ վարդապետէ պրոնեան բերիացւոյ : Տպագրեալ յամին 1810 :

## Երկրաչափութիւն :

Երեք գիրք բաժնըւած է . ք՝ յերկայնաչափութեն , ՚ի մակարդակաչափութեն և ՚ի հաստատաչափութիւն : Հարկաւոր և օգտակար գիտութիւն մի է . զուարճութիւն կուտայ սորվողներուն գործնական կանոններովը . թէ ինչպէս պէտք է չափել ու իմանալ լեռներու և աշտարակներու մէկմէկէ հեռաւորութիւնը եւն : Աշխատասիրեալ գրաբառ շարադրութիւն ՚ի Հ . Սահակ վարդապետէ պրոնեան բերիացւոյ : Տպագրեալ յամի տն 1794 :

## Լափիմձրտէա:

Որ է չրջուն մշտնջենաւոր՝ տարեկան գուշակութեց: Աշխատասիրեալ գերապայծառ Սարգիս արքեպիսկոպոսի: Տպագրեալ շատ անգամ: Յամին 1748, 1752, 1772, 1796:

## Թովմա գեմբացի:

Հոգեւորական գիրք ազդու խրատներով. չորս մասն բաժնըված. գրաբառ շարադրութ՟ն: Այլ եւ այլ թարգմանութ՟ն շատ անգամ տպագրած է. բայց այեկը՝ վերջին թարգմանութիւնն է. 'ի լոյս ընծայեալ 'ի Հ. Վրթանէս վրդ՟պտէ ասկէրեան կոստանդնուպօլսեցւոյ: Տպագրեալ յամին 1786:

## Թուաբանութիւն:

Երկու գիրք կըբաժնըվի: Ուր կան կերպ կերպ կանոններ ամէն տեսակ հիսապի. հարկաւոր ուսումն է, մանաւանդ վաճառականութեն: յօրինեալ գրաբառ շարադրութ՟ 'ի Հ. Սուքիաս վարդապետէ աղամալեանց շոռօթեցւոյ: Տպագրեալ յամին 1781:
Թուաբանութիւն համառօտ աշխարհաբառ. ուր կան դիւրին կանոններ, ու օրինակներ ամէն հիսապի: Ունի եւ ետքէն մէկ յաւելուած մը զուարճալի խաղերու վրայ համբանքներով: Աշխատասիրեալ 'ի Հ. Խաչատուր վրդ՟պտէ սիւրմէլեան կոստանդնուպօլսեցւոյ: Տպագրեալ յամին 1788:

ժա

## Ժամագիրք ։

Շատ անգամ կոխված է, ի՝ 1742. 1766. 1777. բայց ընտիրը վերջին տպագրութիւնն է յամին 1793 ։ Այս տպագրութեանս վերջը աւելցուցած է նաև ննջեցելոց շարականները ։

## Իմաստասիրութիւն բարոյական ։

Գիրք իմաստալից՝ բարոյական խրատներով զարդարված. որուն մէջը կըգտնըվին զանազան հին պատմութիւններ, առակներ ու զուարճալի խօսքեր ։ Նոյնքէն աւելցուցած է մասնաւոր ծանօթութիւն հին պատմութիւններու. ու մեկնութիւն մթին բաներուն ։ Թարգմանութ̅ և ընտիր գրաբառ շարադրութ̅ 'ի լոյս ընծայեալ 'ի Հ. Վրթանէս վարդապետէ ասկերեան կոստանդնուպօլսեցւոյ ։ Տպագրեալ յամին 1793 ։

## Խթան զղջման ։

Խրատներ և մտածութիւններ ապաշխարութեան և խոստովանութեան վրայ ։ Թարգմանեալ գրաբառ շարադրութ̅ լատին լեզուէ 'ի Տէր Պետրոսէ մուհուպեան ։ Տպագրեալ յամին 1727 ։

## Խոկմունք քրիստոնէական ։

Գիրք ամսօրեայ մըտածական աղօթից. համառօտ հոգեշահ և ազդու խօսքերով ։ Զանազան թարգմանութ̅ գրաբառ շարադրութ̅ տպագրեալ. որոնց մէջը՝ վերջին թարգմանու-

նութին է ընտրելագոյն · աշխատասիրեալ ՚ի Հ. Վրթանէս վարդապետէ ասկերեան կոստանդնուպօլսեցւոյ : Տպագրեալ յամին 1771 :

## Խորհուրդ ժամապաշտութեան :

Գիրք կրթութեան ժամապաշտութեան · յիշեցնելով տնօրինական խորհուրդները քրիստոսի՝ վկայութեամբք սրբոց գրոց, ու մեկնաբանութեամբք : Աշխատասիրեալ գրաբառ շարադրութեամբ ՚ի Հ. Մատթէոս վարդապետէ եւդոկիացւոյ : Տպագրեալ յամին 1775 :

## Խորհրդատետր սրբոյ պատարագին :

Տպագրեալ յամին · 1741 : Եւ կրկին անգամ մեծագիր և փոքրագիր · յամին · 1809 :

## Խրատք կրօնաւորական կատարելութեան :

Խրատական գիրք հարկաւոր ամենայն վիճակի մարդկան · որ կըսորվըցընէ ամէն տեսակ առաքինութիւններ՝ ինչ որ պէտք է ունենալ քրիստոնէին : Թարգմանեալ գրաբառ շարադրութեամբ ՚ի Հ. Վրթանէս վարդապետէ ասկերեան կոստանդնուպօլսեցւոյ : Տպագրեալ յամին 1779 :

## Ճաշիկ վարուց սրբոց տօնելեաց : Ճաշիկ վարուց սրբոց յիշատակելեաց :

Որք են համառօտ պատմութիւն սրբոց՝ գրաբառեր.

երկու մասն է. մէկը՝ այն որոց վերայ՝ զորս կըտօնէ հայոց եկեղեցին: Տպագրեալ յամին 1800: Եւ երկրորդը այն որոց վերայ՝ որք կյիշատակվին յայսմաւուրքին մէջը: Տպագրեալ յամին 1803: Աշխատասիրեալ Հ. Մկրտիչ վարդապետի աւքերեան գաղատացւոյ:

## Նուռ կենաց:

Փոքրիկ գիրք մի է գրաբառ շարադրուած. ուր կըբովանդակվին մեկնութիւնք որք խորհըրդոյ պատարագի. հանդերձ յարմար պատկերօք հին և նոր կտակարանաց. ևս և խորհըրդաւոր աղօթքներով: Հաւաքեալ 'ի Վ. Աթանաս վրդպետէ կոստանդնուպօլսեցւոյ այլի ախմօնեան: Տպագրեալ յամին 1750:

## Կերակուր քահանայից:

Խրատներ և զգուշութիններ քահանայից համար 'ի գործս ածային պաշտաման: Թարգմանեալ 'ի լատին լեզուէ 'ի գրաբառ Տէր Ածատրոյ ջուղայեցւոյ: Աս գրքիս եաւէն կոխված է և այն փոքրիկ գրքոյկը, որ կըրվի արհեստ փրկութեն կամ հրահանգ քրիստոնէական վարուց. Թարգմանեալ յաշակերտաց Մխիթարայ մեծի Աբբայի: Տպագրեալ յամին 1760:

## Աշխ. ժամանակի:

Գիրք հոգևորական ազդու խրատներով. ուր կերևնայ ոչնչութի ժամանակաւոր բարեաց՝ բաղդատելով յաւիտենականութեան հետ: Թարգմանեալ գրաբառ 'ի Հ. Զաքարիա վարդապետէ Աւէքսանեան ակնեցւոյ: Տպագրեալ յամին. 1750:

Կաս

## Կտակարան ։

Աւետարան, գործք առաքելոց, պօղոսի և կաթուղիկեայց թղթերով ․ զանազան գրքով շատ անգամ տպված է ։

## Կրթութիւն աղօթից ։

Կրթութիւն մտածական աղօթից ․ գրաբառ լեզուաւ ։ Մէջը կան և ստանաւորներ այբբենական կարգով առ սբ ծածկինն ։ Ետքէն դրված է և կարգ լիակատար ներբողութ̄ օրհնութն տալոյ հոգեւորաց ։ Արարեալ 'ի գերայարգ Մխիթարայ Աբբահօրէն մերմէ ։ Երկու հեղ տպված է ․ առաջինն յամին 1718 ․ իսկ երկրորդը՝ յամին 1772 ։ Որ և է ընտրելագոյն, թէ տպագրութեն կողմանէ, և թէ աղնուութեան պատկերաց ։

## Հանգանակ հաւատոյ ։

Որ է բացատրութիւն կամ մեկնութիւն բանից հաւատամքին ։ Յօրինեալ ռամկական լեզուաւ, հայերէն և տաճկերէն 'ի Հ․ Իգնատիոս վարդապետէ փափազեան կոստանդնուպօլսեցւոյ ։ Տպագրեալ յամին 1807 ։

## Հանդերձեալ կենաց գիրք ։

Գրաբառ լեզուաւ շարադրած գիրք մի է ուր կը հաստատէ զանազան օրինակներով սբ գրոց՝ թէ կայ հանդերձեալ կեանք ։ Թարգմանեալ 'ի Յովհաննէս վրդպետէ Նիկոմիդացւոյ ։ Տպագրեալ յամին 1731 ։

Հե-

## Հեգերէն ։

Առաջին կանոնը սաղմոսին տընատած, պըզ-տիկ տըղոց կարդալ սորվելու համար ։

## Հիւսեակ բարեբանութեանց ս՛բ. Ա՛ծածնին ։

Ներբողական գովեստք ս՛բ կուսին վ՛ն գե-րազանցութե՛ ա՛ծամայրութե՛ ն՛ր ։ Յօրինեալ գրաբառ շարադրութ՛ ’ի Հ․ Մատթէոս վար-դապետէ Եւդոկիացւոյ ։ Տպագրեալ յամին 1775 ։

## Չորեքշաբթի բանք ։

Չորս Թուղթ միաթերթ տպած՝ համառօտ խրատներ է աշխարհաբառ լեզուաւ․ իբրև նիւթ տարեկան մտածութե՛ և ջերմեռան-դութե՛ բարեպաշտից ։ Աշխատասիրեալ ’ի Հ․ Իգնատիոս վարդապետէ փափազեան կոստանդնուպօլսեցւոյ ։ Տպագրեալ յամին 1804 ։

## Հրահանգ եօթնեկի ։

Գիրք աղօթից գրաբառ շարադրութ․ որուն մէջը կան զանազան աղօթքներ շաբթու ա-ւուրց վ՛ր․ և կրթութ՛ հոգևոր գործոց բա-րեպաշտութե՛ ։ Յօրինեալ ’ի Հ․ Միքայէլ վ՛րդ՛պետէ չամչեանց կոստանդնուպօլսեցւոյ ։ Տպագրեալ յամին 1802 ։

Հրա

## Հրաշից ու նծածնի ։

Զանազան պատմութիւնք սքանչելեաց սբյ կու-սին, գրաբառ լեզուաւ. հաւաքեալ Թարգ-մանուե̃ Հ. Զաքարիա վարդապետի ակնեց-ւոյ ալէքսանեան ։ Տպագրեալ յամին 1772 ։

## Ձայն քրիստոսի ։

Հոգևորական գիրք ազդու խրատներով Քսի բերնէն առ հաւատացեալ հոգի. և ուրիշ աղօթքներ առ Քս, գրաբառ լեզուաւ ։ Շա-րադրեալ Տն Մխիթարայ մեծի Աբբայի ։ Տպագրեալ յամին 1753 ։

## Ղազար փարպեցի ։

Այս վէպս ունի գիրք պատմութե ցանկալի հնասիրաց, բաւական տեղեկութի կուտայ հինգերորդ դարուն գիտնականներուն վրայ հայոց ազգին. արշակունեաց Թագաւորու-Թե բաժնըվելէն սկսեալ. մինչև 'ի մարզպա-նուե վահանայ մամիկոնէի ։ Եւ որովհետև մերձաւոր է ժամանակով սբց Թարգման-չաց, կրնայ համարվիլ հեղինակ շարադրու-Թե, մանաւանդ յընտիր պարզութե ։ Տպա-գրեալ յամին 1793 ։

## Ճաշոց գիրք ։

Երեք հատոր մեծադիր ։ Տպագրեալ յամին 1686 ։

## Ճարտասանութի ։

Ի հինգ գիրս բովանդակեալ ։ Այս կըստ-

վը.

վերջընէ չինել ամմէն կերպ ձաւեր ըստ արուեստի ճարտարանութեան. զանազան կանոններով, և երևելի վարդապետաց օրինակներով. որ շատ դիւրուն կուտայ սորվողներուն։ Յօրինեալ գրաբառ շարադրութեամբ 'ի Հ. Ստեփաննոս վարժապետ վարդապետէ Ագոնց։ Տպագրեալ յամին 1775։

## Մեկնութիւն աւետարանին Մատթէի։

Ընդարձակ բացատրութ̄ ու գեղեցիկ վարդապետութ̄, գրաբառ շարադրած 'ի գերայարգ րաբունապետէն մերմէ Մխիթարայ Աբբայէ։ Տպագրեալ յամին 1737։

## Մեկնութիւն երգերգոց։

Համառօտ ու իմաստալից մեկնութիւն սբյն գրիգորի Նարեկացւոյն 'ի վր̄ երգոց երգոյն սողոմոնի՝ պարզ ոճով։ Տպագրեալ յամին 1789։

## Մեկնութիւն ժողովողի։

Բացատրութիւն ժողովող գրոցն սողոմոնի։ Յօրինեալ պարզ ոճով 'ի գերայարգ Մխիթարայ Աբբահօրէն մերմէ։ Տպագրեալ յամին 1736։

## Մեկնութիւն չորեքտասան թղթոյն պօղոսի։

Գրաբառ շարադրած է՝ ընդարձակ և գեղեցիկ բացատրութ̄ բանից ու իմաստից։ Այս

գործ-

գործքիս առջի հատորը տպված է․ յորում կըբովանդակի մեկնութիւն հռովմայեցւոց, և առաջին կորնթացւոց թղթոցը։ Արարեալ ՚ի Հ․ Գաբրիէլ աթոռակալ վարդապետէ աւետիքեան կոստանդնուպօլսեցւոյ։ Տպագրեալ յամին 1806։

## Մխիթար գօշ։

Գրաբառ փոքրիկ գիրք մի է իմաստալից առակներու և բարոյական խրատներու։ Հեղինակը է Մխիթար վարդապետը որ կըսվի գօշ։ Ետևէն տպված է նաև խրատական գէրաղանց ոտանաւորները որ հօրն մերոյ Ներսէսի շնորհալւոյ․ և կարապետ վարդապետի։ Տպագրեալ յամին 1790։

## Մշտնջենաւոր պարզատօմար։

Այսինքն, անփոփոխ աղիւսակներով տարեկան կարգաւորութիւնք ամ՟ տէրունական տօնից և սբ՟ց, և աւուրց պահոց, հանդերձ տօնացուցիւ․ ուր կը գըտնուին ամեն աւուր յարմար շարականները և ընթերցուածները։ Աշխատասիրութ՟բ Հ․ Վրթանէս վարդապետի ասկէրեան։ Տպագրեալ յամին․ 1783։

## Մտածութիւն՝

՚Ի վ՟ր եօթն գլխաւոր ցաւուց սբ՟ ածածնին։ Արարեալ գրաբառ և աշխարհաբառ Հ․ Գաբրիէլ աթոռակալ Վարդապետի աւետիքեան։ Տպագրեալ յամին 1810։

Մառ

## Մտածութիւն՝

Զարչարանաց տն մերոյ յսի քսի : Արար-եալ գրաբառ շարադրութ՝ 'ի Հ. Մատթէոս վարդապետէ եւդոկիացւոյ : Տպագրեալ յամին 1759 :

## Յարացոյց ապաշխարողի :

Որ է մեկնութիւն ողորմեա ինձ ած սաղմո-սին, հանդերձ համառօտ պատմութ՝ վարուց դաւթի մարգարէին․ յորդորելով զմեզ յա-պաշխարութիւն : Թարգմանեալ գրաբառ 'ի Պետրոս վրդպետէ Թիֆլիզեցւոյ․ և ուղղա-գրութ՝ 'ի լոյս ածեալ 'ի գերայարգ Մխի-թարայ Աբբահօրէն մերմէ : Տպագրեալ յամին 1731 :

## Յիշատակարան :

Ասոր մէջը Տաճկու լեզուաւ կպատմըվին երևելի պատմութիւններ ու պատերազ-մունքներ, որ հանդըպեցան ֆրէնկիստան 1807 տարւոյն մէջը․ տպեալ յամին 1807 :

## Յովհաննէս իմաստասէր :

Ճառ նորա ընդդէմ երևութականաց : Ա-ճառս է այն անուանի Ճառը զոր ոմանք կը-կոչեն Ճառ մարդեղութեան, ու մեր նախնի-քը հարքը կըյիշեն, ու վկայութ կըբերեն․ տպագրութ՝ 'ի լոյս ընծայեցաւ յամի 1807 փարիզու մեծ դպրատան օրինակէն հանած․ ծանօթութ՝ Հ. Մկրտիչ վարդապետին աւ-

քէ.

քերեան դաղատացւոյ ։ Տպագրեալ
1807 ։

## Նարեկ ։

Այն է սքանչելի գիրք աղօթից սբյ Հօրն մերոյ Գրիգորի Նարեկացւոյն ։ Երեք անգամ տպագրած յամի տն 1789 · 1795 · և
1807 ։

## Նարեկի լուծմունք ։

Բացատրութիւն դժուարին տեղեաց Նարեկին՝ զգուշաւոր լուծմամբ։ Աշխատասիրութեամբ Հ. Գաբրիէլ աթոռակալ վարդապետի աւետիքեան կոստանդնուպօլսեցւոյ ։
Տպագրեալ յամին 1801 ։

## Նարեկ պատկերազարդ ։

Սբյն Գրիգորի Նարեկացւոյն աղօթքներէն ու ճառերէն քաղած՝ ու յարմարցուցած է շաբթու աւուրց վր · վայելուչ պատկերներով զարդարած ։ Կրկին անգամ տպագրեցաւ · առաջինն յամի 1763 · իսկ 'ի վերջին տպագրութեն յամի 1804, ետեւէն դըրվեցան տաղեր ու գանձեր նոյն սբյն հանդերձ տարբերութեք ձեռագիր օրինակաց ։

## Խուլթ բժշկական ։

Որ է համառօտ ծանօթութեն բնական իրաց, բուսոց · հանքաց են ։ Որք կան և բժշկական հարկաւոր իրատներ առողջութե համար ։

ման ։ Յօրինեալ աշխատասիրութ̃ Պարոն Յովակիմ բժշկի օղուլլուխեան աշխարհա-բառ լեզուաւ ։ Տպագրեալ յամին 1806 ։

## Նուագարան օրհնութ̃եց ։

Որ է մեկնութ̃ի աւագ օրհնութեց սաղմո-սարանին, և ինչ որ անկից 'ի զատ մը գրոց մէջ կայնէ․ յարմարցնելով աւագ օրհնու-թ̃եց շարականին․ գրաբառ շարադրութ̃։ Յօ-րինեալ 'ի Հ․ Միքայէլ վարդապետէ չամ-չեանց կոստանդնուպօլսեցւոյ ։ Տպագրեալ յամին 1801 ։

## Ուղղածուծ ա̃ծաբանութ̃ն ։

Այն է համառօտութ̃ի ա̃ծաբանական ուս-ման ։ Թարգմանեալ գրաբառ լեզուաւ 'ի Պետրոս վ̃րդ̃պտէ թիֆլիզեցւոյ․ և տպագրեալ սրբագրութ̃ 'ի Դիոնեսիոս վ̃րդ̃պտէ մանա-սեան կոստանդնուպօլսեցւոյ, յամին 1748։

## Ուսումնականութ̃ի նաւուղղութ̃ե ։

Է գիրք օգտակար գիտութ̃ե․ որ նրասր-վերցնէ 'ի ձեռն այլ և այլ ուսմանց անմո-լար ճանապարհորդել խորունկ ծովերուն մէջ ։ Նաև էն գրված է զանազան աղեւսակ-ներ նշանակաց բնական թուոց՝ ծոցոյ և չա-փողի անկեանց․ և ն̃ ։ Յօրինեալ գրաբառ լեզուաւ 'ի Հ․ Ղուկաս վարդապետէ օղուլ-լուգեան տրապիզոնցւոյ ։ Տպագրեալ յա-մին 1809 ։

Պատ-

## Պատկեր տօնից սբ̃ ա̃ծածնի ։

Որ է ինն քարոզական ճառք տօնախմբութեանց սբ̃ ա̃ծածնին և տէրունական տօնից · խորհրդաւոր յարմարութ̃ բանից սբ̃ գրոց ։ Կայ ետևէն և տասներորդ ճառ 'ի պաշտպանութե̃ն սբ̃ կուսին · ու գովեստ սբ̃յն Յովսէփայ · հանդերձ տասներկու գեղեցիկ պատկերներով ։ Յօրինեալ գրաբառ ' պարզ ոճով 'ի Հ · Միքայէլ վարդապետէ չամչեանց կոստանդնուպօլսեցւոյ ։ Տպագրեալ յամին 1805 ։

## Պատմութի̃ն ա̃ծաշունչ սբ̃ գրոց ։

Որ է համառօտութի̃ն պատմութե̃նց հին և նոր կտակարանաց, աշխարհաբառ լեզուաւ ։ Աշխատասիրեալ 'ի Հ · Յովհաննէս վարդապետէ զօհրապեան կոստանդնուպօլսեցւոյ ։ Տպագրեալ յամին 1803 ։ Նոյնն կրկին անգամ տպագրեալ ուղղագրութ̃ և յաւելուածով նոյն հեղինակին յամի 1805 ։

## Պատմութի̃ն

Դահմազ ղուլի խանին տաճկերէն ։ Հեղինակն է գամալտարի Յարութիւն ։ Տպագրեալ յամին 1800 ։

## Պատմութի̃ն հայոց ։

Սկսեալ 'ի ստեղծմանէ աշխարհի մինչև 'ի 1784 · թուականն քրի̃ ։ Կըբաժնըվի իրեք հատոր · և իւրաքանչիւր հատոր երկու գիրք է ։

է ։ Այս երեք հատորին մէջը կըգրուին համ պատմութիւնք մեր ազգին՝ նահապետաց · Թագաւորաց · իշխանաց ու կաթուղիկոսաց , այլ և տեղիս տեղիս ուրիշ ազգաց պատմութիւններ · Ըարժանի ծանօթութք , ու քննութք ամէն մատենագրաց պատմութիւնը ու կարծիքը ։ Վերջի հատորին ետքը կայ ընտիր ժամանակագրութն ու դասաւորութն կարգի Թուականաց այլ և այլ ազգաց · և համեմատութիւնք շատ Թուականաց ։ Յօրինեալ գրաբառ լեզուաւ՝ ի Հ · Միքայէլ վարդապետէ Չամչեանց կոստանդնուպօլսեցւոյ ։
Տպագրեալ յամի տն 1784 · 1785 · 1786 ։

## Պատմութն՝

Վարուց բարեյիշատակ հօր մերոյ Մխիթարայ մեծի Աբբայի գրաբառ շարադրութք ։ Աշխատասիրեալ Տն Ստեփաննոսի Ածապատեան Արքեպիսկոպոսի և Աբբայի ։
Տպագրեալ յամին 1810 ։

Պարփակութք ։ Համառօտ տեղեկութն անցից և վիճաց սրբազան քահանայապետին Պիոսի վեցերորդի ։ Աշխատասիրութք Հ · Յակոբ վարդապետի ստեփանեան վարատինեցւոյ ·
յամին 1800 ·

## Պարտէզ ։

Որ է գիրք զանազան աղօթից ու խնդրուածոց , գրաբառ շարադրութք ։ Տպագրած է շատ անգամ ։

## Պիտոյից ։

Որ է նախակրթութիւն հռետորական ոճոյ հօրն մերոյ Մովսէսի խորենացւոյն ։ Աընտիր գործքս ծայրէ 'ի ծայր զարդարեալ է Ճարտասանական օրինակներով ։ Տպագրութիւն 'ի լոյս ընծայեալ է յամին 1796․ 'ի Հ․ Յովհաննէս վարդապետէ զօհրապեան կոստանդնուպօլսեցւոյ հարկաւոր ծանօթութիւններով՝ խրթին ու գիտնալու բաներուն ։

## Պնակ այբուբենից՝

փորագրեալ 'ի վենետիկ 'ի պէտս մանկանց ։

## Պսակ կուսին ։

Ջերմեռանդական գրքոյկ փոքրիկ, գրաբառ շարադրութեամբ․ կան աս գրքիս մէջ զանազան աղօթքներ 'ի յիշատակ եօթն ցաւոց որ աստուածածնի․ և 'ի պատիւ եօթն խնդութեանց որ․ նաև հանապազօր մատուցութիւններ որ ածածնայ ցաւոց վերայ՝ երեսուն մասն բաժանուած է ըստ աւուրց ամսոյ ։ Աշխատասիրեալ Հ․ Յակովբ վզդէի սեբաստեան վարդապետեցւոյ ։ Տպագրեալ յամին 1794 ։

## Պսակ քնի ։

Համառօտ տեղեկութիւն տերունական աղօթից, որ գրված է պսակի ձևով 'ի յիշատակ երեսունվեց տարվան կենաց և վաշ

վարուցն քնի ։ Յօրինեալ 'ի Հ. Ղուկաս վրդ̃պտէ օղուլըռուխեան տրապիզոնցւոյ ։ Տպագրեալ գրաբառ լեզուաւ յամին 1810 ։

## Ռոտրիկվէց ։

Գիրք կրթութեան կրօնաւորական և քրիստոնէական կատարելութեան ։ Այս գործքս թէպէտ շատ ճառ է ․ սակայն երեք ճառը միայն տպուած է ․ ա̃ , խոնարհութեան վրայ ․ համակերպութեան ը̃ կամացն այ̃ , և կրօնաւորական ուխտից ։ Թարգմանեալ գրաբառ լեզուաւ 'ի Պետրոսէ վարդապետէ Թիֆլիզեցւոյ ։ Սրբագրութեամբ և տպագրութեամբ 'ի լոյս ընծայեալ 'ի մեծէն Մխիթարայ Աբբահօրէն մերմէ ․ յամին 1741 ․ 1742 ։

## Սալեզացի ։

Որ է սքանչելի գործք մը սր̃յն Ֆրանչիսկոսի սալեզացւոյն , որ գրեց մանաւորապէս աշխարհական քրիստոնէից համար ։ Թարգմանած է հայերէն գրաբառ , ու տպագրութեամբ 'ի լոյս ընծայած 'ի Սարգսէ Աբբեպիսկոպոսէ , յամին 1748 ։

## Սաղմոս ։

Մեծ գիրք և խոշոր գրով ։ Տպագրեալ ձերմակ և կապուտ թղթի վր̃ ․ յամին 1786 ։
Սաղմոս միջակ գրով շատ անգամ տպագրեալ ։
Սաղմոս փոքր, մանր գրով, զանազան տիպք , ը̃ որս կայ նաև համառօտութիւն հնոյ տումարին հռովմայեցւոց , որով կըվարի ազգս հայոց ։

## Սկզբունք քրիստոնէական ։

Գրքոյկ ինչ հոգևորական, որ է կրթութիւն բարի քրիստոնէից ։ Թարգմանեալ գրաբառ լեզուաւ ՚ի Հ. Թէոդորոս վարդապետէ ։ Տպագրեալ յամին 1744 ։

## Վարք՝

Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին գրաբառ շարադրութ. ։ Արարեալ ՚ի Հ. Մատթէոս Վարդապետէ Եւդոկիացւոյ ։ Տպագրեալ յամին 1749 ։

Վարք՝ Սրբոյ հօրն մերոյ Անտոնի աբբայի, շարագրեալ ՚ի սրբոյն Աթանասէ Աղեքսանդրացւոյ ։ Թարգմանեալ գրաբառ լեզուաւ ՚ի Հ. Բարսեղ վարդապետէ Լասլովեան կեռալացւոյ ։ Տպագրեալ յամին 1794 ։

Յաւելուած բանից և գործոց նոյն սրբոյ հօրն Անտոնի, ինչ որ առաջքոյ նր վարուցը կը պակսին ։ Աշխատասիրեալ ՚ի նոյն հեղինակէ գրաբառ լեզուաւ. և տպագրեալ յամի տն 1800 ։

Վարք՝ Սրբոյն Աղեքսիանոսի աշխարհաբառ լեզուաւ ։ Աշխատասիրութբ Հ. Թադէոս վարդապետի Ասկէրեան Կոստանդնուպօլսեցւոյ ։ Տպագրեալ յամին 1800 ։

Վարք՝ Սրբոյն Յովհաննիսի ոյ, որ հիմնադիր եղաւ կարգի կրօնաւորացն, որ կը ծառայեն հիւանդաց, և կըսվին՝ բարի արարէք եղբարք ։ Այս վարուցս ետևէն կայ զանազան խրատներ՝ թէ ինչպէս պէտք է օգնել մխիթարել ու ծառայել հիւանդներուն և հոգեվարքներուն ։ Թարգմանեալ յիտալական

կան լեզուէ աշխատասիրութբ̃ յովհաննու եպ̃ին սեբաստիոյ: Տպագրեալ յամին 1724:

## Վկայութիւնք:

Որ է քաղուածք վկայութեանց 'ի սրբոց հարց հայոց 'ի վերայ գլխաւորութեան սրբոյն պետրոսի առաքելոյն և յաջորդաց նորա: Թարգմանեալ 'ի լատին լեզու 'ի Հ. Ստեփան վարդապետէ աւինկեան զմիւռնեցւոյ: Տպագրեալ երկլիզեան հայերէն և լատիներէն յամի տն̃ 1804:

## Տարեգրութիւն:

Զանազան տետրակներ են, ուր կըպատմըվին աշխարհաբառ լեզուաւ քաղաքական դիպուածներ. բանասիրական տեղեկութիւններ. պատերազմունք տէրութեանց, ու ուրիշ տեսակ տեսակ աղէկ դիտելիքներ: Արարեալ 'ի Հ. Ղուկաս վրդպտէ ինճիճեան կոստանդնուպոլսեցւոյ: Յամին 1799. 1800. 1801. 1802:

## Տեսարան աշխարհի:

Զուարճալի գիրք է գրաբառ պարզ շարադրութեամբ. որ կիմացընէ վայելչութիւնը ու հարկաւորութիւնը անզգայ ստեղծուածոց. զգայուն կենդանեաց, ու իմացական բնութեան. ի̃ մարդկան, և հրեշտակաց: Յօրինեալ 'ի Հ. Յակոբ վարդապետէ ստեփանեան վարատինեցւոյ: Տպագրեալ յամին 1810:

## Տեսութիւն համառօտ ։

Այս գիրքս կը բովանդակէ բոլոր հին ու նոր աշխարհագրութիւնը, կըխօսի ամէն մէկ աշխարհաց, գաւառաց ու թագաւորութեանց վրայ, աշխարհաբառ լեզուաւ ։ Յօրինեալ 'ի Հ. Ղուկաս վարդապետէ Ինճիճեան կոստանդնուպօլսեցւոյ ։ Տպագրեալ յամին 1791 ։

## Տետրակ՝

Հարցմանց քերականութեան, գրաբառ շարադրութեամբ ։ Արարեալ Տեառն Մխիթարայ մեծի Աբբայի ։ Տպագրեալ յամին 1759 ։

Տետրակ՝ Հոգևոր խաղու հանդերձ պատկերներով, գրաբառ լեզուաւ ։ Աշխատասիրութեամբ Տեառն Մխիթարայ մեծի Աբբայի ։ Տպագրեալ յամին 1737, և յամին 1775 ։

Տետրակ՝ Ներողութեանց տաճկեվար լեզուաւ, արարեալ 'ի սօֆեալեան Սահակ Վարդապետէ ։ Տպագրեալ յամի Տեառն 1791 ։

Տետրակ՝ Պատմութեան կայկայց, աշխարհաբառ լեզուաւ ։ Արարեալ Հ. Ղուկաս վրդպտի Ինճիճեան ։

Տետրակ՝ Պատմութեան օդապարիկ գնտոյ, գրաբառ շարադրութեամբ ։ Արարեալ 'ի Հ. Եղիա վարդապետէ Էնտաղեան կոստանդնուպօլսեցւոյ ։ Տպագրեալ յամին 1785 ։

Տետրակ՝ Սպասաւորութեան սրբոյ պատարագին ։

Տետրակ՝ Վարդարանի, տպագրեալ շատ անգամ ։

## Տումար՝

Սր̃յն Լեւոնի հռովմայ հայրապետի՚ի վ̃ր ն̃ք ժողովոյն քաղկեդոնի ։ Նոր թարգմանած ՚ի լատին և ՚ի յոյն լեզուէ գրաբառ շարադրութ̃բ Հ. Մկրտիչ վրդպ̃տի աւգերեան ։ Ուր կան և համաձայն վկայութ̃իք մեր ն̃ք հարց գրքերէն, ու սր̃յն կիւրղի ։ Տպագրեալ երեք լեզուաւ, հայերէն, լատինէրէն և յունարէն, յամին 1805 ։

## Տօնացոյց ։

Որ է գիրք և ցուցակ տօներու ու եկեղեցական արարողութեանց հայաստանեայց եկեղեցւոյ ։

Այս գիրքս երկու դրեւք և մանր բոլորագրով է. մէկը մեծ՝ որ և պարզատօմար կոչի՝ հանդերձ աղիւսակով. իսկ մեկալը պզտիկ առանց աղիւսակի. տպագրեալ յամին 1782 ։

## Ցուցակ՝

Աւուրց լուսնի. չէրչիվէյի մէջ գրված է, ու անանկ ալ կըծախվի ։

## Փիլիսոփայութ̃ի ։

Չորս հատոր է ։ Տրամաբանութ̃ի. Բնաբանութ̃ի. Համաբնաբանութի և Բարոյական ։ Գեղեցիկ գիտութ̃ի է՝ հարկաւոր ամմէն բանասէր մարդկանց. որով մարդուս միտքը կըլուսաւորվի քննելով ամ̃յ ըրածները և իմանալով անոնց պատճառը ։ Թարգման-

մանէ՛ գրաբառ շարադրութ՛ ՚ի Հ. Վրթա-նէս վարդապետէ ասկէրեան: Տպագրեալ յամի տն 1750. 1751:

## Քաղաքավարութե գիրք:

Որ կըսորվըցընէ վայելուչ կանոններ, ինչ որ պէտք ու պատշաճ է մարդկային կեն-ցաղավարութե: Այս գիրքս՝ թէպէտ պարզ գրաբառ լեզուաւ է. սակայն ունի ետեւէն համառօտութի նոյն կանոններուն աշխարհա-բառ լեզուաւ: Աշխատասիրեալ ՚ի Հ. Իգ-նատիոս վրդպէ փափազեան կոստանդնու-պօլսեցւոյ: Տպագրեց՛ յամին 1806:

## Քարոզ գիրք:

Համառօտ քարոզներ քաղեալ ՚ի վկայութեց սբ գրոց, և յընտիր իմաստից սբ հարց և վարդապետաց: Թարգմանեալ գրաբառ ՚ի Հ. Վրթանէս վարդապետէ ասկէրեան կոս-տանդնուպօլսեցւոյ: Տպագրեց՛ յամին 1781:

## Քաւարանի աղօթք:

Որ է համառօտ կրթութի հանապազօրեայ աղօթից վս հոգւոց քաւարանին: Այս փոքր տետրակը հասարակօրէն պարտէզ գրքին հետ մէկ տեղ կըկապվի, բայց կըգտնըվի և առանձին կազմածն ալ: Տպագրեալ յա-մին 1785:

## Քերականութի

Գրաբառ լեզուին հայոց ըստ ուղիղ կանո-նաց: Արարեալ Աբենապատիւ տն Մխի-

թա-

Թարայ մեծի Աբբայի : Տպագրեալ յա֊մին 1739· և 1770:

Նոյնը նորէն շինուած ըստ նախնի ուղղա֊խօսութե՟ հայկաղեան լեզուի : Ուր կան շատ կանոններ և պէսպէս տեղեկութիւններ շիտակ ու անսխալ շարագրութե՟ ընելու, հանդերձ ընտիր վկայութբ՟ հին հեղինակաց հայոց : Ցօրինեալ'ի Հ· Միքայէլ վարդա֊պետէ չամչեանց կոստանդնուպօլսեցւոյ : Տպագրեալ յամին 1779: Նոյնն երկր֊ ան֊գամ տպվեցաւ աւելինէն համառօտ, յամի՟ 1801:

Քերականութի֊ : Իտալերէն, գրաբառ և տաճ֊կերէն, հաւաքեա՟'ի Գերապայծառ Աթա֊նաս եպիսկոպոսէ մերասեան կոստանդնու֊պօլսեցւոյ : Տպագրեալ յամին 1774:

Նոյնը նորէն շարագրած, ուր կան զանա֊զան կանոններ իտալական լեզուի : Նաև սովորական հարկաւոր խօսակցութիւններ, առակաւոր բաներ, պատմութիւններ և մէկ քանի օրինակներ բարևագիրներու՝ երկու լեզուաւ գրաբառ ու տաճկերէն'ի վար֊ժութի համբակաց : Արարեալ'ի Հ· Գաբ֊րիէլ վարդապետէ աւետիքեան կոստանդը֊նուպօլսեցւոյ : Տպագրեալ յամին 1792:

## Քրիստոնէական վարդապետութի :

Ընդարձակ աշխարհաբառ լեզուաւ, ուր կան նաև տաղեր և շարականներ : Շարադ֊րեա՟ Տ֊ն Մխիթարայ մեծի Աբբայի : Տպագ֊րեա՟ երեք անգամ· 1727· 1732· 1771:

Նոյնը գրաբառ, շարադրեալ'ի նոյն Մխի֊թարայ Աբբահօրէն'ի պէտս մանկանց· ա֊սոր մէջը կայ նաև այբբենարան : Տպագրեա՟ երկու անգամ, յամին 1725· և յամին 1750:

Նոյ֊

Դարձեալ համառօտ աշխարհաբար լեզուաւ 'ի պէտս սերտողութե մանկանց : Շարադրեալ 'ի Հ. Զաքարիա վրդպտէ ալէքսանեան ակնեցւոյ : Տպագրեալ յամին 1770 :

## Օգտակարին գունտ :

Տես տետրակ պատմութե օգտակարին գնտոյ :

## Օրացոյց :

Ամէն մէկ տարւոյ համար հետզհետէ կը տպուի :



Այս համառօտ ցանկս բովանդակութիւն է այն գրքերուն միայն, որոց կըփափաքին բարեպաշտք և ուսումնասէր եղբարք գիտնալու և ունենալու, թէ չէ՝ ասոնցմէ 'ի զատ կը գտնուին ուրիշ.քանի մի գրքեր ալ, որ թէպէտ կոխված են վէնէտիկ․ սակայն հնութի ժամանակին և փափաք գրասէր ստացողաց հասուցեր է զամենը, ուստի աւելորդ համարեցանք անոնց անունը դնել այս ցանկիս մէջը։

Ցանկամք որ այս ցանկս յորդոր ըլլայ հայազգի բարեսէր եղբարց, հետաքննին ըլլալու՝ չէ թէ միայն գրքերու անունը գիտնալ․ այլ մանաւանդ ստանալու զփափաք գրասիրութեան․ որով և տեղեակ ըլլալու զանազան ուսմանց և գիտութեան․ որ շատ հարկաւոր է և օգտակար մարդուս․ ինչպէս որ յայտնի է իմաստութեան համը առնողներուն։ Թող որ՝ կարդացողներուն յօժարութիւնը գիրք շինողներուն ձեռքն ալ կը զօրացընէ, որ հետզհետէ նոր նոր բաներ շարադրեն ու տպեն յօգուտ և 'ի պայծառութիւն ազգին 'ի փառս Այ։

